

**ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը
Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ**

Սիրելի՛ սյունեցիներ,

Թանկագի՛ն հայրենակիցներ,

Շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Ավարտվում է 2013 թվականը, իր հետ շրջելով նաև Սյունյաց աշխարհի տարեգրության ևս մեկ էջ: Սովորաբար տարեմուտին մեզնից յուրաքանչյուրն ի մի է բերում արվածն ու չարվածը, ձեռքբերումներն ու բացթողումները, ծրագրում նոր անելիքներ ու նպատակներ:

Անցնող տարում ևս մեզ հաջողվեց տեսանելի ձեռքբերումներ և հաջողություններ արձանագրել Սյունյաց մարզի կայուն զարգացման գործում, սակայն այսօր էլ մարզում կան բազում չլուծված խնդիրներ, իսկ սա նշանակում է, որ գալիք տարում բազում են լինելու նաև անելիքները: 2014 թվականը, համոզված եմ, լինելու է առավել արդյունավետ և բարձր պատասխանատվությամբ աշխատանքի տարի, քանզի մեր համառ աշխատանքի շնորհիվ հնարավոր է դառնալու ավելի բարեկեցիկ դարձնել մեր կյանքը՝ հավատ սերմանելով վաղվա օրվա նկատմամբ: Ուստի, Նոր տարին դիմավորենք նորացված հույսերով ու ծրագրերով՝ դրանք համատեղ ջանքերով կյանքի կոչելու համոզմունքով:

Ամանորը սիրո, բարության և սպասելիքների տոն է: Ուստի, ուզում եմ, որ բազմապատկվեն մեր օջախներում իշխող սերն ու ջերմությունը, որ գալիք տարին լինի միասնության տարի և շրջադարձային դառնա բոլորիս կյանքում:

Թող Նոր տարին հաջողություն, խաղաղություն, բարօրություն բերի մեր ժողովրդին, մեր օջախներում իշխեն սերն ու համերաշխությունը: Եվ թող Ամանորը նոր եռանդ ու երազանք պարգևի բոլորիս և նոր ձեռքբերումներով պսակի յուրաքանչյուրիս ջանքերը:

Բոլորիդ մաղթում եմ աներեր հավատ մեր հայրենիքի և սեփական ապագայի նկատմամբ:

Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀՀ Սյունիքի մարզպետ

Վ. Հակոբյան